ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/11853-2023

«15» 12 2023թ.

«ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՐԵԳ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ
(էլ. փոստ orbita-cjsc@netsys.am)

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 14.12.2023թ. թիվ 07/21/11807-2023 գրության՝ Ձեզ է ներկայացվում պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցման ճշտված տարբերակը:

Հարգելի՛ պարոն Փափազյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00897706) միջև 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցի-տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ պետք է մինչև 30.06.2021թ. երկրորդ և մինչև 30.11.2021թ. երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/04» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2023 թվականի դեկտեմբերի 14-ից միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «ՕՐԲԻՏ Ա» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005028106» հաշվեհամարին վճարել տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 40,568 (քառասուն հազար հինգ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ գումար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

12/15/2023

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770393

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժին՝
010 59 00 47